STEFAN IHRIG. Atatürk in the Nazi Imagination. The Belknap Press of Harvard University Press. Cambridge, Massachusetts / London, England, 2014, 311 p.

«Ի վերջո, ո՞վ է հիմա հիշում հայերի ոչնչացման մասին» հռետորական հարցը Հիտլերը տվել է 1939 թ. օգոստոսի 22-ին Օբերզալցբերգում զինվորական հրամանատարներին ուղղված իր խոսքում, որը հիմնականում նվիրված էր Լեհաստանի նկատմամբ նրա ունեցած անմիջական նպատակներին: Այս հռետորական հարցի իսկության աղբյուրագիտական քննությանը նվիրված մի շարք աշխատանքներ կան[1]: Մյուս կողմից, այս նախադասությունը, պայմանավորված նրա հեղինակի աշխարհին հայտնի լինելու հանգամանքով, մի քանի տասնամյակներ շարունակ, մեծ հաճախականությամբ մատուցվում է աշխարհին և բերվում է իբրև փաստարկներից մեկը Հայոց ցեղասպանության իրողության: Շեշտվում է նաև, մասնավորապես, այն հանգամանքը, որ Հիտլերի այս խոսքերը տեղ են գտել ԱՄՆ Հոլոքոստի հուշային թանգարանում (Վաշինգտոն): Շատ-շատ հայ մարդկանց համար այդ արտահայտությունը արդեն իսկ ձեռք է բերել դասագրքային ճշմարտության արժեք: Այլ կերպ ասած՝ այդ նախադասությունը Հայոց ցեղասպանության հիշողության, ու դրանով իսկ նաև հայոց ինքնության մաս է կազմում: Մյուս կողմից, Հիտլերի խոսքերի ասված-չասված լինելու խնդիրը մեծ կասկածի տակ է դրվում հատկապես թուրքական ժխտողականության համատեքստում: Այսպես թե այնպես, պատմագիտական տեսանկյունից հարցը լրացուցիչ դիտարկումների կարիք է զգում: Եվ եթե աղբյուրագիտական առումով նոր խոսք ասելը

[1] Տե՛ս, օրինակ. Kevork Bardakjian, “Hitler and the Armenian genocide”. Zoryan Institute Special Report No. 3. The Zoryan Institute. Cambridge, Massachusetts, 1985. Բարդակչյան Գ., Հիտլերը և հայերի ցեղասպանությունը, Երևան, «Հայաստան», 1991:

բավականին բարդ է, քանի որ նոր աղբյուրներ պարզապես չկան, ապա հարցը միանգամայն լուսաբանելի է ավելի լայն համատեքստում դիտարկելու պարագայում: Նկատի ունեմ այն միջավայրի քննությունը, որտեղ ձևավորվել է նացիստական գաղափարախոսությունը: Ի մասնավորի, թե գաղափարախոսական ո՞ր գործոններ էին ազդեցիկ, հաճախ նաև՝ որոշիչ, Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների միջև գերմանական իրականության մեջ[2]:

Այս վերջին խնդրի դիտարկմանն է նվիրված Երուսաղեմի Վան Լիռ ինստիտուտի կազմում գործող Հումանիտար և սոցիալական գիտությունների Պոլոնսկի հետազոտական կենտրոնի (The Polonsky Academy for Advanced Studies at the Van Leer Jerusalem Institute) աշխատակից դոկտոր Շտեֆան Իհրիգի «Աթաթուրքը նացիստական մտապատկերում» մենագրությունը: Հետազոտությունը բաղկացած է նախաբանից, վեց գլուխներից, վերջաբանից, աշխատանքում աղբյուրների և գրականության հակիրճ նկարագրությունից, ծանոթագրություններից, ցանկերից:

Աշխատանքի նախաբանը վերնագրված է «Հեռանալով «Էնվերլենդից [Էնվերի երկրից]»» (էջ 1-9): Այստեղ հեղինակը համառոտակի անդրադառնում է օսմանա-գերմանական կապերին սկսած Ֆրիդրիխ Բարբարոսայի ժամանակներից, կենտրոնանալով սակայն 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման ու Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին առկա իրողություններին: Դեռևս XX դարի սկզբներին առկա էր Բեռլին-Բաղդադ երկաթուղու ծրագիրը՝ նախատեսված Գերմանիան Հնդկական օվկիանոսին կապելուն, իսկ կայսր

[2] Բնութագրական է, որ Գ. Բարդակչյանը նույնպես գտնում է, որ «խնդիրը լուսաբանելու» և իր «նախնական ուսումնասիրության առաջ քաշած հարցերին պատասխանելու համար», անհրաժեշտ է հետազոտել «հատկապես XIX դ. վերջին և XX դ. հայ-թուրք-գերմանական հարաբերությունների հարցը, որը լայն ընդգրկում ունի ու անբավարար է ուսումնասիրված»: Տե՛ս Բարդակչյան Գ., նշվ. աշխ., էջ 5:

Վիլհելմ II-ն իրեն հայտարարում էր բոլոր մուսուլմանների պաշտպան: Գերմանական նացիոնալիստները, հատկապես Բեռլինում, տոնում էին երիտթուրքական հեղաշրջումը և գովերգում էին Էնվեր փաշային այն աստիճան, որ որոշ հեղինակները խոսում են Գերմանիայում 1908 թ. անմիջապես հետո «թուրքական տենդի» մասին: Էնվերին անվանում էին «թուրքական Մոլտկե», իսկ Թալեաթին՝ «թուրքական Բիսմարկ»: Գերմանական իրականության մեջ 1909 թ. հակահեղափոխության օրերին Էնվերի արշավը Կոստանդնուպոլսի վրա համեմատվում էր Հռոմի վրա Հուլիոս Կեսարի արշավի հետ: Ինչպես հետագայում նշել է Հիտլերը, մայրաքաղաքի վրա իրականացված այդ արշավն էր, որ կարողացավ երիտասարդացնել Օսմանյան կայսրությունը:

Գերմանա-թուրքական համագործակցության մեկ այլ ոլորտ էր գերմանական ռազմական ներկայությունը օսմանյան բանակում: Որոշ «գերմանացի օսմաններ» կրում էին «փաշա» տիտղոսը Գերմանիայում մինչ իրենց մահը: Հատկապես նշանակալի էր Կոլմար ֆոն դեր Հոլցի և Լիման ֆոն Սանդերսի ազդեցությունը օսմանյան բանակի վրա: Դրա շարքերում էր կռվում Հայոց ցեղասպանության ականատես, հետագայում Աուշվիցի պարետ Ռուդոլֆ Հեսսը: Օսմանյան կայսրության հետ սերտ կապերի մեջ էին բազմաթիվ «գերմանացի օսմաններ», նրանց թվում Գերմանիայի ապագա կանցլերը, Երրորդ ռեյխի ապագա արտաքին գործերի նախարարը, Վաշինգտոնում, Մոսկվայում և Անկարայում ապագա դեսպանները, Հինդենբուրգի, ֆոն Պապենի և Հիտլերի ապագա քաղաքական խորհրդականները: Ինչպես նկատում է հեղինակը, չնայած այն հանգամանքին, որ ընդամենը մի քանի հազար գերմանացի զինվորականներ էին ծառայում Օսմանյան կայսրությունում, «գերմանացի օսմանների» մասնակցությունը Երրորդ ռեյխի վերելքին և պատմությանը տոկոսային առումով անհամաչափորեն շատ ավելի մեծ է, քան

թե Արևմտյան ռազմաճակատում ծառայած գերմանացի զինվորականներին: Հեղինակը հիշեցնում է, որ Առաջին համաշխարհայինի ավարտին օսմանյան կառավարող եռյակը գերմանական սուզանավով էր, որ փախավ երկրից Օդեսա, ապա և Բեռլին:

Սակայն Առաջին համաշխարհայինին հաջորդող երկու տասնամյակներին գերմանացիների երևակայությունը զրավված էր մեկ այլ թուրք անձով. դա այն սպան էր, որն ուղեկցել էր Էնվերին նրա 1911 թ. լիբիական արկածի ժամանակ, որն այցելել էր գերմանական շտաբը 1917 թ. և որը ողջունվել էր Հինդենբուրգի կողմից «Ահ, սա հո Գալլիպոլիի հերոսն է» խոսքերով: Ահա այս անձնավորության՝ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի շուրջն է, որ Գերմանիայում սկիզբ առավ երկրորդ «թուրքական տենդը»:

Հեղինակը նշում է, որ իր աշխատության մեջ փորձել է ցույց տալ, թե ինչ պատկերացումներ ունեին նացիստները Թուրքիայի մասին, և ինչպես էին այն ներկայացնում տպագիր մամուլում, ինչը, ի վերջո, փոխում է նացիոնալ-սոցիալիզմի մասին ցարդ ունեցած պատկերը: Նա իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացրել է երկու կարևոր ժամանակաշրջանների՝ 1919-1923 և 1933-1938 թվականների վրա, ի մասնավորի՝ այդ տարիների տպագիր մամուլի հազարավոր հոդվածների, պաշտոնական հայտարարությունների վերլուծության, ինչպես նաև Երրորդ ռեյխի առաջնորդի հնչեցրած ձևակերպումներին:

Աշխատության առաջին գլուխը վերնագրված է «Թուրքիայի դասերը Գերմանիայի համար. թուրքական Անկախության պատերազմը որպես վեյմարյան մամուլի գլխավոր իրադարձություն, 1919-1923 թթ.» (էջ 10-67): Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին Օսմանյան կայսրության տարածքում պլանավորված էր կերտել անկախ Հայաստան, Արևմտյան Անատոլիայի հսկայական տարածքները տալ

Հունաստանին, ձևավորել երկրորդ հունական կամ հունահայկական Պոնտական պետություն, ազատել Կոստանդնուպոլիսը թուրքերից և այլն: Ահա այս պայմաններում էր, որ 1919 թ. մայիսին Մուսթաֆա Քեմալը Թուրքիայի արևելքում սկսեց այսպես կոչված «թուրքական Անկախության պատերազմը», որն իրականում ազգայնամոլական շարժում էր և հենց այս ձևակերպումն է այսօր ընդունելի օբյեկտիվ պատմագրության համար: Պատերազմը տևեց չորս տարի՝ մինչև 1923 թ. կեսերը, որին հաջորդեց Լոզանի հաշտության պայմանագիրը (1923 թ.), այդպիսով՝ վերանայման ենթարկելով Փարիզի խաղաղության պայմանագիրը, Սևրի պայմանագիրը (1920 թ.): Լոզանում էր, որ հաստատվեցին Թուրքիայի մինչ օրս գործող սահմանները, այն դարձավ ամբողջովին ազատ իր ներքին և արտաքին քաղաքականության մեջ, և քեմալիստների այսպես կոչված «Ազգային ուխտի» բոլոր դրույթները իրականություն դարձան: Հուսահատ ու մեկուսացած Գերմանիայի համար այս իրադարձությունները նացիոնալիստական երազանքի իրականացման դրսևորումներ էին: Ուստի պատահական չէ, որ թուրքական ազգայնամոլական շարժումը դարձավ Վեյմարյան հանրապետության մամուլի հիմնական նյութը: Սկզբից ևեթ գերմանական մամուլն ընդունում էր, որ Թուրքիան կարող է «տիպային դեր» (role model) խաղալ գերմանացիների համար: Արդեն 1921 թ. նացիստական թերթերից մեկը իր մի հոդվածը ուղղակիորեն վերնագրել էր «Թուրքիան – տիպային դեր»: Ժամանակ անց արդեն որոշակի թուրքական ստրատեգիաները շեշտվում էին որպես մի բան, որոնք կարող էին ուղղակիորեն կրկնօրինակվել Գերմանիայում: Թուրքական օրինակը ցույց էր տալիս, որ փարիզյան պայմանագրերը *կարող են* վերանայվել և թե *ինչպես* կարելի է դա անել: Բնութագրական է, որ Մուսթաֆա Քեմալ փաշայի, որպես «թուրքական Վերսալի» դեմ ռազմական դիմադրություն իրականացնող զինվորակա-

նի, լուսանկարն առաջին անգամ հայտնվեց, օրինակ, *Kreuzzeitung* թերթում, Վերսալյան պայմանագրի կնքումից երկու օր անց, 1919 թ. հուլիսի սկզբին: Այս կերպ գերմանական մամուլը գտավ իր հերոսին: Քեմալի ղեկավարած շարժումը տարբեր բնութագրումներ ուներ. «հայրենասիրական շարժում», «ազգային գործողություն», «ազգայնական շարժում», «քեմալիստներ»: Ժամանակ անց գերմանական մամուլը սկսեց օգտագործել «մեր Մուստաֆա Քեմալ» ձևակերպումը: Վեյմարյան հանրապետության վաղ շրջանում թուրքական թեման կենդանի էին պահում կենտրոնից մինչև ծայրահեղ աջ գերմանական մամուլի օրգանները: Թուրքական ազգայնամոլական շարժումն արագորեն դառնում էր վերին աստիճանի գերմանական թեմա: Մամուլում տեղ էր գտնում Գերմանիայի «օսմանացումը»: Մեխանիզմներից մեկը յուրահատուկ գերմանական թեմաները Թուրքիայում ընթացող զարգացումներին զուգահեռաբար ներկայացնելն էր: Այդ պարագայում թուրքերը միշտ ավելի լավ վիճակում էին երևում, քան թե գերմանացիները: Բանը հասնում էր նրան, որ «սուլթանի» փոխարեն օգտագործվում էր «կայզեր», Կոստանդնուպոլսի փոխարեն՝ «կայզերշտադտ», «իսլամի» փոխարեն՝ «թուրքական եկեղեցի» ձևակերպումները: Փորձագետների դերում հանդես էին գալիս Օտտո Լիման ֆոն Սանդերսը, նացիստական մամուլի համար հոդվածներ գրող Հանս Տրյոբստը և ուրիշներ: Քեմալա-բոլշևիկյան ժամանակավոր մերձեցումն անգամ Գերմանիայի համար ներկայացվում էր որպես սովորելու բան: 1922 թ. նոյեմբերին որոշ թերթեր մեջբերումներ օգտագործեցին Մուսթաֆա Քեմալի հարցազրույցից, որտեղ նա ինքն իրեն ներկայացնում էր որպես նացիոնալիստ և սոցիալիստ: Այս և նման հայտարարությունները շատերին առիթ էին տվել որպես համարժեք գաղափարախոսություններ դիտելու քեմալիզմը, ֆաշիզմը և նացիոնալ-սոցիալիզմը:

Թուրքիայի մասին հաղորդումների կարևոր թեմաներից էր քեմալիստների պայքարի «հակաիմպերիալիստական», «հակաարևմտյան» եզրույթներով բնութագրումը: Քննարկումների մեջ կարևոր, զգայուն թեմա էր պատերազմի հանցագործներին դաշնակիցների տրիբունալներին հանձնելու հարցը, քանի որ խնդիրն ուղղակիորեն առնչվում էր նաև գերմանական իրողությունների հետ: Եվ Թուրքիան նույնպես սրընթաց կերպով ներգրավվեց այս «գերմանական թեմայի» քննարկման մեջ: Զարմանալի չէ, որ Էնվերն ու Թալեաթը բնութագրվում էին «այսպես կոչված պատերազմի հանցագործներ» ձևակերպմամբ, իսկ 1920 թ. թերթերը մեծ ուրախությամբ մեջբերում էին Քեմալի խոսքերը, որ նման տրիբունալներ չպետք է լինեն ո՛չ Գերմանիայի և ո՛չ էլ Թուրքիայի համար: Թուրքիայի նկատմամբ Անտանտի «իմպերիալիստական» բնութագրվող ծրագրերն որակվում էին որպես «Թուրքիայի ոչնչացման», «Թուրքիայի վերացման» նպատակ հետապնդող, դրանք ներկայացվում էին որպես «Թուրքիայի բռնաբարություն»: Մամուլը սկսեց պատկերել Թուրքիային որպես Դավիթ, որը պայքարի է ելել Գողիաթ Անտանտի դեմ: 1920 թ. սկսած թերթերն անընդհատ նշում էին, թե թուրքերը՝ Մուսթաֆա Քեմալի ղեկավարությամբ, ինչ էլ լինի՝ չեն կարող պարտվել, և կրկնում էին այս միտքը անընդհատ, մինչև որ ստորագրվեց Լոզանի պայմանագիրը: Գերմանական մամուլը ակնդետ հետևում էր, թե արդյո՞ք ռազմական հաջողությունները նույն կերպ կշարունակվեն դիվանագիտական ասպարեզում: Եվ Լոզանի քննարկումների ժամանակ, երբ թուրքական պատվիրակությունը մերժում էր ինչ-ինչ կետեր, մամուլի համար մեկ այլ հերոս հայտնվեց՝ Իսմեթ Ինոնյուն (թուրքական պատվիրակության ղեկավարը): Թերթերի շատ հոդվածներում թուրքական թեմատիկայով ձևակերպումները տպագրվում էին թունդ տառերով, հաճախ էլ ավարտվում էին Քեմալից արված մեջբերումներով:

Լոզանի պայմանագիրը ներկայացվում էր որպես «թուրքական Վերսալ»՝ այդպիսով ավելի ընդգծելով Թուրքիայի «տիպային դերը» գերմանացիների համար: Գերմանական ազգայնական մամուլը քեմալիստների հաղթանակը ներկայացնում էր որպես «ազգային կամքի քաղաքականության հաղթանակ»: Անց էր կացվում այն միտքը, որ «ճշմարիտ ազգային զգացմունք» ունեցողները կարող են հասնել նրան, ինչին հասան թուրքերը, այդ կերպ «թուրքական դասը» դարձնելով միաժամանակ ավելի վտանգավոր և ավելի հրատապ: 1922 թ. գերմանական թերթերից մեկը հրապարակեց մի ծաղրանկար, վերնագրված «Ինչպես վերանայել Փարիզի խաղաղության պայմանագիրը»: Պատասխանի մեջ շեշտվում էր, որ դա պատմաբանների, դիվանագետների կամ քաղաքագետների քննարկումների խնդիրը չէ, այլ պետք է դրան հասնել «գործողությունների» միջոցով կամ «ինչպես որ թուրքերը վարվեցին Սևրի հետ» (այն է՝ սրով, ասել է թե՝ զենքով): «Թուրքական ճանապարհը» լայնորեն ընդունվում էր որպես Վերսալի պայմանագրի վերանայմանը հասնելու միակ ուղի:

1919-1923 թթ. ընթացքում ազգայնական մամուլում տեղ գտած կարևոր կոնցեպտներից էր «ակտիվ» և «պասսիվ» քաղաքականության քննարկումը, որտեղ «ակտիվ» էր որակվում քեմալականների դիրքորոշումը՝ պատերազմ Անտանտի դեմ հանուն արժանապատիվ խաղաղության: Քաղաքականության նոր ձևը կապվում էր Մուսթաֆա Քեմալի անվան հետ: Գեբելսի ուսուցիչներից ու կուռքերից մեկը համարվող հակաժողովրդավար, հակասեմիտ Ֆրիդրիխ Հուսոնգը «Մարդը և զանգվածները» հրապարակման մեջ Քեմալին բնութագրում է որպես «Առաջնորդ (ֆյուրեր) անձնավորություն», որպես մի մարդու, որը անօգնական և հուսահատ զանգվածներին ձևափոխեց ազգի, բանակի, մարդ, որը զանգվածների առջև նպատակ դրեց: Հոդվածագրի համար Քեմալը «պողպատյա անձնավորություն» է և «նրա հաղթանակները ոչ թե

հանգամանքների բերումով է, այլ հանգամանքները նրա հաղթանակի հետևանքներն են»:

Մենագրության երկրորդ գլուխը վերնագրված է ««Անկարան Մյունխենում». Հիտլերի խռովությունը և Թուրքիան» (էջ 68-107): Հեղինակը գլխի սկզբում նկատում է, որ Մուսոլինին հաճախ դիտվում է որպես նացիստների համար առաջնային «տիպային դերի» կրող, ինչն առավելապես պայմանավորված է Հերման Էսսերից պատկերավոր մեջբերմամբ, որտեղ Հիտլերը բնութագրվում է որպես «գերմանական Մուսոլինի»: Մինչդեռ Մուսոլինիի տիպային դեր խաղալու գործառույթը՝ ֆաշիստական Իտալիայի ավելի ուշ շրջանում ունեցած նշանակության հետևանք է, ինչը և դրդել է շատ հեղինակների գերագնահատել Իտալիայի և Հռոմի վրա արշավի (1922 թ. հոկտեմբեր) դերը և առաջ քաշել այն թեզը, որ նույնիսկ իբր թե Հիտլերի խռովությունը (պուտչը) բացառապես նպատակ ուներ կրկնօրինակելու Մուսոլինիի ղեկավարությամբ Հռոմի վրա կատարված արշավը: Քիչ պատմաբաններ են նշել Մուստաֆա Քեմալի դերը Գերմանիայում մինչպուտչյան մթնոլորտի ձևավորման գործում և, որպես կանոն, նացիզմին ու Հիտլերին նվիրված ուսումնասիրություններում բաց է թողնված թուրքական ազդեցության դերը: Հակիրճ անդրադառնալով այդ հեղինակների գործերին, Իհրիգը նշում է, որ իրականում Քեմալը, ավելի ճիշտ՝ նրա գործունեության լուսաբանումն ավելի մեծ դեր է խաղացել: Եվ եթե գերմանական մամուլն ընդհանուր առմամբ արդեն առաջ էր քաշում Թուրքիայից սովորելու թեզը, ապա նացիստական մամուլը ավելի առաջ գնաց և հեղինակն այս գլխում ցույց է տալիս, թե ինչպես էին նացիստները «աճում» Թուրքիայի հետ:

Այս խնդիրը Իհրիգը լուծում է մամուլի երկու օրգանների (մեկը՝ նացիստների պաշտոնական օրաթերթի – *Völkischer Beobachter*, մյուսը՝ նացիոնալ-սոցիալիստական կուսակցության կիսառազմականացված թևի՝ «ինտելեկտուալ զենքի»

գործառույթ իրականացնող SA-ի մյունխենյան շաբաթաթեր-թի - *Heimatland*) հրապարակումների վերլուծության միջոցով: Բնութագրական է, որ այս շաբաթաթերթը Քեմալի նկատմամբ իր վերաբերմունքն արմատապես փոխեց 1920 թ. դեկտեմբերից՝ նացիոնալ-սոցիալիստական կուսակցության պաշտոնաթերթ դառնալու հաջորդ իսկ օրվանից: Երկու շաբաթ անց այդ պարբերականում արդեն հայտնվեց «Հերոսական Թուրքիա» վերնագրով հոդված, ևս մեկ ամիս անց՝ «Թուրքիան – տիպային դեր [ունեցողը]», որտեղ հեղինակը կանխատեսում էր, թե «Այսօր թուրքերը ամենաերիտասարդ ազգն են: Մի օր գերմանական ազգը չի ունենալու այլ ընտրություն, եթե ոչ ապավինելու թուրքական մեթոդներին»: Ի թիվս տարաբնույթ թեմաների, այս թերթերում անդրադարձ էր կատարվում նաև քեմալա-բոլշևիկյան մերձեցմանը, նկատելով, որ թուրքերը բոլշևիկներ չեն և միայն օգտագործում են վերջիններիս՝ իրենց նպատակին հասնելու համար: Թուրքիայի քրիստոնյա փոքրամասնությունները, մասնավորապես հույները և հայերը, ներկայացվում էին որպես հինգերորդ շարասյուն: Համեմատություն կատարելով իտալական փորձառության հետ (մինչև Հռոմի վրա արշավը), նացիստական կուսակցության պաշտոնական օրգանը նշում էր, որ «իտալական օրինակը ցուցում է ազգային ոգու հաղթանակը ներքին քաղաքականության մեջ, մինչդեռ Թուրքիան սովորեցնում է մեզ ճակատամարտում հաղթելու ձևը: … Թուրքիան ձգտում էր վիրտուալ ձևով պահպանել իր գոյությունը, սակայն հետո եկավ հերոսը, որը հաղթահարեց օսմանների ֆատալիզմը ձաղկելով նրանց ինքնասիրությանը: Ազգը հետևեց նրան ոգևորվածությամբ և ինքնազոհության պատրաստակամությամբ: … Մինչդեռ 60 միլիոնանոց հզոր գերմանական ազգը ստորագրեց իր սեփական ամոթի տակ Վերսալի պայմանագրում առանց դիմադրության»: 1922-23 թթ. Heimatland-ը շարունակում էր հատուկ ուշադրություն դարձ-

նել թուրքական օրինակին: Նկատելով, որ Քեմալ փաշան պատռել է Սևրի պայմանագիրը և բախում է Կոստանդնուպոլսի դռները, թերթը առաջ էր քաշում «Օգնիր ինքդ քեզ և դու օգնություն կստանաս» թեզը, նկատելով, որ այս ասացվածքի ճշմարտացիության մեջ գերմանացիները կարող են համոզվել թուրքերից: 1922 թ. վերջերին քննարկելով առաջնորդության և ժողովրդավարության խնդիրներին առնչվող հարցեր, թերթը նկատում էր, որ «մեկ հզոր մարդը՝ Մուսթաֆա Քեմալն էր, որ միայնակ արթնացրեց հիմարաբար մտածմունքների մեջ խորասուզված, հյուծված և ամբողջապես հուսահատված թուրք ազգը և նա էր, որ պարտությունը ձևափոխեց փայլուն հաղթանակի»: 1923 թ. սեպտեմբերի սկզբից սկսած, վեց շաբաթ շարունակ, այս պարբերականը ծավալուն հրապարակումներով անընդհատ անդրադառնում էր Թուրքիայի խնդիրներին և այդ կերպ նացիստները դառնում են «թուրքական դասերի» ամենամոլի և հետևողական պաշտպանները:

Խնդրին անդրադառնում էին նաև այլ, առավելապես աջ ուղղության պարբերականներ: Այսպես, 1921 թ. հոդվածներից մեկում հեղինակը գրում է. «Մենք, գերմանացիներս, շուտով երևի թե պետք է առերեսվենք այն որոշման հետ, որ հանձնելու ենք մեր իրավունքները և մեր սեփականությունը մեր թշնամիներին…: Եթե Մուսթաֆա Քեմալն ու նրա մարդիկ այս պահին լինեին Բեռլինում, նրանք կունենային այլ պատասխան (արդեն իսկ 1919-ին նրանք ունեին այլ պատասխան) և կիրագործեին այն: Եթե հիմա բեռլինյան հրեությունը նստած լիներ Կոստանդնուպոլսում, նրանք [Քեմալի կողմնակիցները] երբեք չէին գնա Անկարայի վրա, այլ վստահաբար… կկապիտուլացվեին և այսօր ոչինչ չէր մնա թուրքական կայսրությունից»: Բնութագրական է, որ 1921-ին, բազմաթիվ տասնամյակների ընթացքում թերևս առաջին անգամ, Թուրքիայում բացակայում էր գերմանական ռազմական անձնակազմ, որը կաջակցեր թուրքերին նրանց պատերազ-

մում: Միակ անձնավորությունը գերմանացի վարձկան Հանս Թրոբստն էր: Ու նա էլ, «պատերազմի հերոս» Էրիխ Լյուդենդորֆի հորդորով, լրագրության բնագավառում իր առաջին փորձերը, որոնք վերաբերում էին քեմալիստներին, իրականություն էր դարձնում վեց հոդվածներից բաղկացած շարքով նացիստական *Heimatland* շաբաթաթերթում: Եվ կրկին համեմատություն. «Սևրի պայմանագրի կնքումից հետո քաղաքական իրադրությունը Թուրքիայում հայտնի էր [թե ինչպիսին է]: Դա նույնն էր, ինչ վիճակում որ է մեր հայրենիքն այսօր՝ Վերսալի պայմանագրի կնքումից չորս տարի անց: … Սակայն Թուրքիան այսօր թափով վերելք է ապրում»: Հոդվածներից վերջինում Թրոբստը, թուրքական փորձի իմի բերմամբ, առաջարկում է Գերմանիայում ստեղծել միասնական տեղական ճակատ, ձեռնամուխ լինել «ազգային զտման [իրականացման]» և այդ առիթով ողջունում է Լոզանի կոնֆերանսով նախատեսված բնակչության փոխանակությունը Հունաստանի և Թուրքիայի միջև, ինչպես և՝ ստեղծել բանակ զրեթե ոչնչից, ինչը զարգացած արդյունաբերություն ունեցող Գերմանիայի համար դժվար չի լինի:

Շտեֆան Իհրիգը նշում է, թե դժվար է հստակ պատկերացում ունենալ այս հոդվածների՝ դրանց ընթերցողների վրա ունեցած ազդեցության մասին, սակայն կարելի է վստահաբար պնդել, որ նացիստների առաջնորդները կարդացել են դրանք: Մասնավորապես, Թրոբստի առաջին հոդվածի լույս տեսնելուց հետո Հիտլերը հրավիրել էր նրան հանդիպման իր և նացիոնալ-սոցիալիստների ղեկավարության հետ՝ պատմելու Թուրքիայի մասին: Հիտլերի քարտուղարը՝ իր ղեկավարի անունից, գրել էր Թրոբստին. «Այն ինչին Դուք ականատես եք եղել Թուրքիայում, դա այն է, ինչը մենք անելու ենք ապագայում ինքներս մեզ ազատագրելու համար»: Հիտլերի մեկ այլ գործընկերոջ վկայության համաձայն, երբ նա առաջին անգամ լսել էր Հիտլերին Մյունխենի գարեջրատանը

1922 թ. նոյեմբերին, վերջինս խոսել էր Մուսթաֆա Քեմալի և Մուսոլինիի օրինակների մասին: Բնութագրական է, որ սա եղել է Թրոբստի հոդվածաշարի հրապարակումից ավելի քան մեկուկես տարի առաջ: 1923 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին նացիստական վերոնշյալ շաբաթաթերթը իր ամեն համարում, ծավալի մեկ ութերորդի չափով, անդրադառնում էր Թուրքիայի թեմային, իսկ համարներից մեկում «Տվեք մեզ Անկարայի կառավարություն» վերնագրով հոդվածում նշում էր, որ Գերմանիայի ազատագրումը պետք է սկսել Բավարիայից և որ ծանրության կենտրոնը պետք է Բեռլինից տեղափոխվի Մյունխեն: Հիտլերի պուտչից հինգ օր առաջ այդ պարբերականում առկա հոդվածների մի շարք անդրադառնում էր ազգային հեղափոխության թեմային և կոչ էր անում Բավարիայի ղեկավարին «դառնալ երկրորդ Քեմալ փաշա և ստեղծել մեծ, միասնական, միացյալ Գերմանիա»: Սրան հաջորդեց Հիտլերի պուտչը, որը մեծապես ազդված էր ավելի շատ Քեմալի, քան թե Մուսոլինիի գործունեությամբ: Հեղինակը այս առիթով մանրամասնորեն քննարկում է Հիտլերի պուտչի և դրա գաղափարական հիմնավորվածության մեջ Թուրքիայի Անկարայի կառավարության նմանողությամբ գործելու թեմային առնչվող ուղղակիորեն առկա չորս վկայությունները, որոնք այս կամ այն կերպ երևում են Հիտլերի դատավարության նյութերում: Հիտլերն ինքը դատավարության ժամանակ նշում է, որ ինչպես ցույց է տալիս Թուրքիայի փորձը, երկրի ազատագրումը կարող է գալ ոչ կենտրոնից՝ Կոստանդնուպոլսից: Եվ Հիտլերը նախ հղում է այն փաստը, որ երիտթուրքական հեղաշրջման ժամանակ Էնվեր փաշան արշավեց Կոստանդնուպոլսի վրա և նոր վարչակարգ հաստատեց այդտեղ: Սրանից հետո նա հիշատակում է «ամենադասական օրինակը՝ Իտալիան», երբ ֆաշիստական ալիքը եկավ հյուսիսից և գրավեց Հռոմը: Այսինքն, Թուրքիան դառնում է այն պրիզման, որի միջոցով Հիտլերը հասկանում է ի-

տալական օրինակը: Դատավարության վերջին՝ քառասնորսե-րորդ օրը Հիտլերը կրկին, վերոբերյալ հերթականությամբ, խոսում է Քեմալ փաշայի և Թուրքիայի, ապա նոր միայն Մուսոլինիի մասին: Հեղինակը կրկին շեշտում է, որ նման հերթականությամբ հիշատակումը ոչ թե սոսկ խոսակցության մեջ մտքերի շարադրման հերթականություն է, այլ վկայում է Հիտլերի մտքերում որոշակի հիերարխիայի առկայության մասին: Բնութագրական է, որ 1924 թ. մարտին հայտնի Թրոբստը, նացիստական մեկ այլ պարբերականում տպագրված հոդվածում կրկնում է հիտլերյան բանաձևումը, ասված դատարանում. Մուսթաֆա Քեմալն իր գործունեությունը՝ օրենքի տեսանկյունից, սկսեց որպես դավաճան, սակայն իրականում փրկեց մարդկանց տառապանքից:

Շտեֆան Իհրիգն ապա հակիրճ անդրադառնում է «օսմանյան գերմանացիների» խնդրին և դիտարկում է Օտտո ֆոն Լոսովի, Հանս Հյումաննի, Կոնստանտին ֆոն Նեյրաթի, գեներալ Բրոնսար ֆոն Շելենդորֆի, Օտտո ֆոն Ֆելդմանի, Մաքս Էրվին ֆոն Շոյբներ-Ռիխտերի, Ռուդոլֆ Հեսսի գործունեության դրվագները: Հեղինակը նշում է, որ անգամ Հիմլերը մի պահ 1920-ականների սկզբներին դիտարկում էր Թուրքիա տեղափոխվելու ծրագիրը: Հեղինակը եզրակացնում է, որ 1923 թ. նոյեմբերին մյունխենյան իրադարձություններում թուրքական, քեմալական գաղափարական ներկայացվածության ծավալը բավականին հստակ է: Թուրքական գործոնն էր ստեղծել այն մթնոլորտը, որը նացիստներին թույլ էր տվել մտածելու, որ իրենց կազմակերպած պուտչը կարող է հաջողությամբ պսակվել: Եթե հավատալու լինենք Հիտլերի 1936 թ. ճառերից մեկում ասված այն մտքին, որ 1919-1923 թթ. նա մտածում էր միայն ու միայն պուտչի մասին, դա նշանակում է, որ նա շատ է մտովի անդրադարձել թուրքական զարգացումներին: Այսինքն, պետք է նկատի ունենանք Հիտլերի վրա Մուսթաֆա Քեմալի ունեցած կարևոր, եթե ոչ կարևորա-

գույն ազդեցության մասին: Սա էլ կարող է մասնակիորեն բացատրել Աթաթուրքի պաշտամունքի փաստը Երրորդ ռեյխում: Բնութագրական է, որ մինչև Հռոմի վրա կատարված արշավը, Իտալիայի ֆաշիստական մթնոլորտի մեջ որոշակի դեր ուներ թուրքական թեման: Թերևս պատահական չէ, որ մինչ նշված արշավը, Մուսոլինին իրեն կոչում էր նաև «Միլանի Անկարայի Մուսթաֆա Քեմալ»: Հեղինակը կրկին նկատում է, որ Մուսոլինիի վրա ուշադրություն դարձնելուց շատ առաջ գերմանական մամուլը քննարկում էր թուրքական դասերը և դրանց՝ Գերմանիայի համար ունեցած դերը: Այսինքն, նացիստներն «աճում էին Թուրքիայի հետ», մանավանդ որ Հիտլերն էլ մոլի թերթ կարդացող էր, հատկապես իր շարժման վաղ փուլում՝ 1920-ական թթ. սկզբին:

Մենագրության երրորդ գլուխը վերնագրված է «Հիտլերի «Մթության միջի աստղը». նացիստների հիացմունքը Աթաթուրքով և նրա Նոր Թուրքիայով» (էջ 108-146): 1923 թ. հետո Թուրքիան ձեռնամուխ է լինում տնտեսության վերակառուցման և մոդեռնիզացման, չնայած պետական համակարգը մնում էր ինքնակալական ժողովրդավարության օրինակ՝ մեկ քաղաքական կուսակցությամբ: Բանտարկության ավարտից հետո Հիտլերի դեմ մեկ անգամ ևս մեղադրանքներ են առաջադրվում 1929 թ., և իր պաշտպանական ճառում Հիտլերը կրկին զուգահեռներ է անցկացնում իր և Աթաթուրքի, իր և քեմալական շարժման միջև: Իհրիգը անդրադառնում է նաև Հիտլերի *Mein Kampf*-ում (1925 թ.) Աթաթուրքի բացակայության խնդրին: Սակայն Հիտլերն անդրադառնում է Հին Թուրքիային, մատնանշելով, մասնավորապես, որ «Գերմանիան պարզապես չունի Էնվեր փաշա»: Անդրադարձն Աթաթուրքին Հիտլերի աշխատությունում տեղ է գտնում անուղղակիորեն, երբ խոսվում է «ակտիվ դիմադրության» մասին և առաջ է քաշվում այն միտքը, որ Ռուրի շուրջ հնարավոր բանակցությունների պարագայում Գերմանիան պետք է խոսի ուժի

դիրքերից՝ մի պահվածք, որը Նոր Թուրքիայի օրինակով անընդհատ մեխվում էր գերմանական մտայնության մեջ մամուլի կողմից: Նացիոնալ-սոցիալիստական կուսակցության 1928 թ. հավաքին Հիտլերի ուղղված խոսքում կրկին Գերմանիան համեմատվում է Թուրքիայի հետ: Գերմանական մամուլում տարբեր առիթներով գրվում էր Թուրքիայի և Գերմանիայի ճակատագրերի նմանության մասին: Անգամ Վեյմարյան հանրապետության ուշ շրջանի պատմության դասագրքերում Թուրքիայի ազգայնամոլական-քեմալական շարժումը մեկնաբանվում է որպես «ազգային նվիրվածության դրսևորման փայլուն օրինակ»:

1933 թ. նոյեմբերին գերմանական թերթերից մեկը գրեց, որ «Ադոլֆ Հիտլերի գերմանական նացիոնալ-սոցիալիզմը և թուրքական քեմալիզմը մոտ հարաբերությունների մեջ են գտնվում»: 1933 թ. մարտին թերթերից մեկը տարածեց հայտարարություն, որ Ֆաշիզմի հետազոտության ընկերակցությունում կայացել է դասախոսություն «Մուսթաֆա Քեմալի ազգայնական հեղափոխությունը Թուրքիայում գաղափարական-պատմական զուգահեռ է Գերմանիայի նորացմանը և գերմանական ֆաշիզմին»: Զեկուցողը Գեբելսի գործակիցներից էր, 1932 թ. լույս տեսած Հիտլերի կենսագրության հեղինակը: Զեկուցման վերջում նա ընդգծում է, թե որքան նման գծեր ունեն Աթաթուրքի և Հիտլերի կենսագրությունները: 1933 թ. հուլիսին Հիտլերը հարցազրույց է տալիս թուրքական *Milliyet* օրաթերթին: Նա նշում է, որ լավ հարաբերություններից զատ մի ինչ-որ ավելի բան կա, որը կապում է երկու ռեժիմները. դա փոխադարձ սիմպատիան է և հասկացողությունը՝ հենված նման նպատակներ հետապնդելուն: Կենտրոնական հնչեղություն ուներ Հիտլերի դիտարկումը այսպես կոչված «մութ 1920-ականների» մասին: Հիտլերն ասում է. «Թուրքիայի ստեղծմանն ուղղված այն ազատագրական պայքարը, որ վարում էր Աթաթուրքը իրեն [Հիտլերին] տվեց վստա-

հություն, որ նացիոնալ-սոցիալիստական շարժումը նույնպես հաջողություն կունենա: Այս տեսանկյունից շարժումը Թուրքիայում եղել է իր համար պայծառ աստղ»: 1938 թ., իր ծննդյան օրը, հանդիպելով թուրք քաղաքական գործիչների պատվիրակությանը, Հիտլերը նշել է. «Աթաթուրքը առաջինն էր, որ կարողացավ ցույց տալ, որ հնարավոր է մոբիլիզացնել և վերստեղծել այն ռեսուրսները, որ երկիրը կորցրել է: Այս առումով Աթաթուրքը ուսուցիչ էր. Մուսոլինին նրա առաջին, իսկ ես՝ երկրորդ աշակերտն էի»:

Թուրքիայի Հանրապետության տասնամյակի առիթով կայացած հանդիպմանը նացիոնալ-սոցիալիստական կուսակցության արտաքին հարաբերությունների բաժնի ղեկավար Վերներ Դեյթզը, խոսելով Նոր Թուրքիայի՝ Գերմանիայի համար խաղացած դերի մասին, դիտարկում էր քեմալիզմը, նացիզմը և ֆաշիզմը որպես նույն երևույթի ճառագայթումներ: Գերմանական համակրանքի վառ դրսևորում էր նաև այն, որ 1933 թ. հոկտեմբերի 30-ին նացիոնալ-սոցիալիստական կուսակցության մի ջոկատ հանդիսավոր երթով մոտեցավ Բեռլինում թուրքական դեսպանությանը և ավելի քան 12 ժամ պատվո պահակ կանգնեց: Դրական վերաբերմունքը բազմիցս տարաբնույթ դրսևորումներ էր ունենում նաև դիվանագիտական արարողակարգում: Իսկ 1936 թ. ապրիլին թուրքական մամուլում հայտարարվեց, որ «թուրքերը արիացիներ են»: Հիտլերի լուսանկարիչը իր հուշերում նշել է, որ Հիտլերն ուներ Աթաթուրքի կիսանդրին, որը նրա փայփայած իրերից մեկն էր:

1933-1938 թթ. նացիստական կուսակցության գլխավոր օրգան *Völkischer Beobachter*-ը հարյուրավոր հոդվածներ է տպագրել Թուրքիայի մասին: Նացիստական մամուլը բազմիցս ընդգծում էր, որ Աթաթուրքի հեղափոխությունը եղել է ազգային հեղափոխություն և տիպային դեր է խաղացել նացիստների համար և մատնանշում էր Թուրքիայի և Գերմանիա-

յի միջև եղած նմանությունը: 1941 թ. գարնանը թոշակառու գերմանացի գեներալը իր մի հոդվածում շեշտում էր, որ Քեմալ Աթաթուրքը նացիստական Գերմանիայում եղել է ամենաշատ հիացմունքի արժանի պետական գործիչներից և մերօրյա ազգային գործիչներից մեկը: 1933 թ. *Cumhurriyet*-ին տրված պատասխաններում Հիտլերը նշել է, որ ինքը մեծ ուշադրությամբ երկար տարիներ հետևել է Թուրքիայի էպիկական պայքարին, և որ Մուսթաֆա Քեմալի հանճարն ու էներգիան ուղղորդել են իրեն այն տարիներին, երբ նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունը գտնվում էր ընդդիմության մեջ:

Աթաթուրքը մահացավ 1938 թ. նոյեմբերի 10-ին: Դա Գերմանիայի պատմության կարևոր էջերից մեկի՝ «կոտրված ապակիների գիշերվա» (*Reichskristallnacht*) հաջորդ օրն էր: Եվ այնուամենայնիվ, գերմանական մամուլի առաջին էջերում, որպես կանոն, Աթաթուրքի լուսանկարն էր՝ մահվան մասին հաղորդագրությամբ հանդերձ: Թերթերի մեծամասնությունը տպագրեց Հիտլերի, նաև Ռիբենտրոպի, ֆոն Պապենի ցավակցական հեռագրերի տեքստերը: Մասնավորապես, Հիտլերի հեռագրում Աթաթուրքը բնութագրվում էր որպես «մեծ զինվորական, հանճարեղ պետական գործիչ, պատմական անձնավորություն»:

Աշխատության չորրորդ գլուխը վերնագրված է ««Թուրքական ֆյուրերը». նացիստական վարքը և ազգային կրթությունը» (էջ 147-171): Հեղինակը մեջբերում է 1938 թ. դեկտեմբերին *Hamburger Tageblatt* թերթը, որը հրապարակել է «Ֆյուրերը և ազգը» վերնագրով մի էսսե: Դրանում հեղինակը զարգացնում էր գաղափարներ կատարյալ ֆյուրերի (մասնավորապես, թե ինչպես նա պետք է կառավարի) և ազգի մասին: Նկատվում էր, թե «նա, ով մտածում է ավելի շատ իր, քան թե ողջ ազգի բարեկեցության մասին՝ երկրորդ կարգի արարած է… Միայն նա, ով աշխատում է ապազգայի համար առանց իր անձի մասին մտածելու կամ նմա՛ն մարդու շրջապատը՝ կարող են

հիմքեր ստեղծել իրենց ազգի ապագա երջանկության և առաջընթացի համար»: Այս ամենը համահունչ էր ֆյուրերի (առաջնորդի), ղեկավարության և ազգի մասին նացիստական գաղափարներին: Եվ բնութագրական է, որ հրապարակման հեղինակը դրանից քիչ առաջ մահացած Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքն էր՝ «թուրքական Կեսարը»: Աթաթուրքի կենսագրությունն օգտագործվում էր պատմելու և բացատրելու համար երկու հրաշքները՝ թուրքական ազգայնամոլական շարժումը և նոր, մոդեռն, ժողովրդական (*völkisch*) Թուրքիայի շարունակական տնտեսական աճը: Դրանք այն պրիզմաներն էին, որոնցով նացիստները և Երրորդ ռեյխը պատկերացնում էին Նոր Թուրքիան: Ընդհանրապես, Աթաթուրքի պատմությունը դա կատարյալ ֆյուրերի պատմություն էր Երրորդ ռեյխի հեղինակների համար: Եվ Աթաթուրքի պատմությունը անընդհատ պատմելով ենթադրվում էր, որ այժմ էլ գերմանացիները պետք է սովորեն՝ թուրքական օրինակի հիման վրա, թե ինչ է նշանակում ֆյուրերի հետևից գնալը: Աթաթուրքը ներկայացվում էր իբրև ապացույց այն բանի, որ պատմությունը կերտում են մեծ մարդիկ: Ո՛չ զանգվածները և ո՛չ էլ ժողովրդավարությունն են առաջարկում նման մեծությունների կերտման ճանապարհը, այլ միայն ֆյուրերը: Աթաթուրքի կենսագրության մասին գրքերից մեկի հեղինակ Ֆրից Ռյոսլերը պնդում էր, որ Մուստաֆա Քեմալն այն եզակի մարդկանցից մեկն է, որը «ժողովրդական զանգվածներից վեր բարձրացավ և արարեց համաշխարհային պատմությունը»: Եվ հեղափոխական Թուրքիան փոխեց աշխարհը: Այդ իսկ պատճառով այդ համակարգը կարիք է զգում հատուկ ուշադրության: Ու ա՛յդ Թուրքիան է կարող տիպային դեր խաղալ ազգային հեղափոխության համար:

Բնութագրական է, որ քեմալական շարժման մասին առաջին գերմաներեն գիրքը հրատարակվել է 1924 թ.: Առաջին հուշագրությունը հրատարակվել է 1925 թ. նացիստ դարձած

Հանս Թրոբստի կողմից: Անհաշիվ գրքեր ու հուշեր են հրատարակվել Թուրքիայում ընթացող Առաջին համաշխարհային պատերազմի մասին: Իսկ 1928 թ. գերմաներեն հրատարակվեց Աթաթուրքի 36 ժամանոց ճառը (Նութուք), որտեղ իմի էր բերված նրա՝ թուրքական ազգայնամոլական շարժման և Նոր Թուրքիայի ստեղծման մեկնաբանությունը: Իհրիգը նշում է Աթաթուրքի ևս երկու կենսագրականների մասին, որոնցից մեկը վեց տարում ունեցել էր 10 վերահրատարակություն, մյուսը՝ առաջին իսկ տարում (1935 թ.)՝ յոթ հրատարակություն: Նա նկատում է, որ մինչև 1938 թ. Աթաթուրքի մասին հազարավոր կենսագրականներ են հրատարակվել գերմանական մամուլում: Իսկ 1934 թ. հրատարակված «Համաշխարհային քաղաքականության ղեկավարները» գրքի առաջաբանում նշված էր, որ միայն Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը կարող է համադրվել Հիտլերի և Մուսոլինիի հետ: Մեկ այլ տեղ բնածին առաջնորդ համարվող Աթաթուրքը ներկայացվում էր իբրև «հասարակ զինվորականից մինչև պետական գործիչ» ճանապարհին անցած անձնավորություն, այսինքն՝ նույն կերպ, ինչպիսին հաճախ ներկայացվում էր Հիտլերի անցած ճանապարհը: Ընդհանրապես, Երրորդ ռեյխի տեքստերում Հիտլերին բնութագրողածականները նույնական էին Աթաթուրքին ներկայացնող բնութագրումներին՝ «մեծ», «հանճարեղ», «փրկիչ», «կերտող», «առաքյալ»: Եվ իհարկե «Աթաթուրքը արիացի էր, ինչպես որ էր Հիտլերը»: Տեքստերից շատերում Աթաթուրքի պատմությունը ներկայացվում էր որպես կատարյալ ֆյուրերի՝ երջանիկ ավարտ ունեցող պատմություն: Աթաթուրքի կենսագիրներից Ֆրից Ռյոսլերն իր գրքում եզրակացնում էր, թե «Մենք՝ գերմանացիներս ... կարող են սովորել Թուրքիայի նորագույն շրջանի պատմությունից, որ ազգը չի կորչի, եթե ազատ և արժանապատիվ ապրելու ճանապարհին հետևում է իր ֆյուրերին ... Եվ երբ նա մեզ խնդրում է զոհաբերության դիմել, ապա

չպետք է լինի գերմանացի, որը դա չիրականացնի ուրախ սրտով այն նույն կերպ, ինչպես վարվեց թուրք ազգը»: Շեշտվում էր նաև այն հանգամանքը, որ Աթաթուրքը ոչ միայն վերացրեց սուլթանական կարգերը և խալիֆայությունը, այլ նաև ամբողջապես աշխարհիկացրեց Նոր Թուրքիան: Եվ միայն «թուրքական Նապոլեոնի»՝ Էնվեր փաշայի դասերն էին (պարտությունը ռուս-թուրքական ճակատում), որ գերմանացիները ոչ մի կերպ չէին ցանկանում սովորել:

Աշխատության հինգերորդ գլուխը վերնագրված է «Նոր Թուրքիան. նացիստների մտապատկերները արդիական ժողովրդական պետության մասին» (էջ 172-208): Գերմանական թերթերից մեկը 1933 թ. գրում էր. «Այնպես, ինչպես Ադոլֆ Հիտլերը ստեղծեց նոր Գերմանիան, և Մուսոլինին՝ նոր Իտալիան, այդպես էլ ժամանակակից Թուրքիան բացառապես Մուսթաֆա Քեմալի ստեղծածն է և միաժամանակ վկայությունն է այն բանի, թե ինչպես ֆյուրերի կարևորագույն անձը կարող է կերտել երկիր ու ազգ»: Ու թերևս պատահական չէ, որ քեմալիզմը հաճախ բնութագրվում էր իբրև «նացիոնալհեղափոխական գաղափարախոսություն»: Չնայած այն հանգամանքին, որ 1930-ական թթ. սկզբներին Թուրքիան բոլոր չափանիշներով հետամնաց երկիր էր, բնավ համեմատելի չէր արևմտյան արդյունաբերական երկրների հետ, նացիստական պատկերացումներում այն ներկայացվում էր որպես ամենաառաջավորը իր գաղափարախոսության, կիրառվող քաղաքական գործիքների, և նպատակների պատճառով: Նոր Թուրքիայի նկատմամբ նացիստական մտապատկերները ներառում են բազմաթիվ թեմաներ: Դրանցից մեկը փոքրամասնությունների խնդիրն էր, որը Երրորդ ռեյխի ձևավորման ժամանակ Թուրքիայում արդեն «լուծվել» էր՝ հայերի մեծամասնությունը ոչնչացվել կամ լքել էր երկիրը: Հույների մեծ մասը նահանջել էր հունական բանակի հետ, իսկ մնացողները՝ բնակչության «փոխանակման» ճանապարհով, մեկնել էին

Հունաստան։ Ոչ-մուսուլմանական փոքրամասնությունները մնացել էին հիմնականում Ստամբուլում, սակայն Նոր Թուրքիայի մասին նացիստական պատկերացումներում դրանք էական չէին՝ նացիստների համար Թուրքիան ռասայական տեսանկյունից համասեռ երկիր էր։ Նշելով, որ Հայոց ցեղասպանությունը իր այս աշխատանքում դիտարկելիք խնդիրներից չէ, Իհրիգը ծանոթագրությունում ավելացնում է, որ շուտով նույն հրատարակչությունը լույս է ընծայելու իր հեղինակած «Justifying Genocide: Germany, the Armenian Genocide, and the Long Road to Auschwitz» («Ցեղասպանության արդարացումը. Գերմանիան, Հայոց ցեղասպանությունը և Աուշվից տանող երկար ճանապարհը») մենագրությունը։ Հեղինակը վստահ է, որ նացիստները լավ էլ գիտեին Հայոց ցեղասպանության մասին, քանի որ «այնքանով, որքանով որ նրանք աճում էին Թուրքիայի և թուրքական անկախության պատերազմի [իրողությամբ], նույնչափ էլ նրանք աճում էին Հայոց ցեղասպանությամբ»։ Հեղինակը համառոտ անդրադառնում է Յոհաննես Լեփսիուսի գործունեությանը, Թալեաթ փաշայի սպանությանը և դատավարությանը, 1922 թ. երկու երիտթուրքերի սպանությանը Բեռլինում և նկատում, որ այս առիթով գերմանական մամուլում տեղ գտած քննարկումները պարարտ հող էին ստեղծում գերմանական հակահայկականության համար, որն իր արմատներով բավականին նման լինելով XIX դարի վերջերից դրսևորվող հակահրեականությանը, ներկայացնում էր հայերին որպես «Արևելքի հրեաներ»։ Հակահայկական կարծրատիպեր պարունակող հրապարակումներից էին Կառլ Մայի նովելները Արևելքի մասին։ Հայտնի է, որ Հիտլերը այդ հեղինակի գործերի անհագ ընթերցողներից էր և պարբերաբար վերընթերցում էր նրա բոլոր ստեղծագործությունները, անգամ երբ ղեկավարում էր Գերմանիան։ Այդ հեղինակի գլխավոր հերոսի անունը թարգմանաբար հնչում է որպես «Կառլ, գերմանացիների որդի»։ Եվ ահա

այդ որդին XIX դարի վերջին տեղ գտած հայկական կոտորածների մասին հետևյալ համոզմունքն է հայտնում. «Թուրքերը ճիշտ վարվեցին, որ ծեծելով սպանեցին հայերին: Թուրքի համար այլ ճանապարհ չկար իրեն հայից պաշտպանելու:

… Հայն աշխարհում ամենավատ տիպարն է: Նա վաճառում է իր կնոջը, իր երիտասարդ աղջկան, նա գողանում է իր եղբորից: Ողջ Կոստանդնուպոլիսը բարոյապես թունավորված է հայերի կողմից: Թուրքերը չէ, որ սկսել են հարձակումը, դա հայերն են արել: … Թուրքը ինքնապաշտպանվում է…: Հայը հեղափոխական է, ում օգտագործում է անգլիացին՝ սուլթանին գահընկեց անելու համար»: Հակահրեական պատկերացումները տարածվում էին նաև հայերի վրա, որոնց բնութագրելու համար տարածված էին «մակաբույծներ» և «ժանտախտ» որակումները: Հայերի մասին նման բացասական կաղապարները շարունակվում էին շրջանառվել գերմանական մամուլում մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը: Կենտրոնական Եվրոպայի հրեաների և օսմանահպատակ հայերի միջև տարվող զուգահեռներից մեկը ներկայացրեց վերը հիշված Հանս Թրոբստը իր 1923 թ. հոդվածների շարքում՝ դա երկրի «էթնիկ զտման» խնդիրն էր: Արդեն Հիտլերի դատավարության ժամանակ 1924 թ. այդ ժամանակվա նացիստական գլխավոր թերթի առաջին էջում լույս տեսած հոդվածում Թրոբստը ուղղակիորեն մատնանշում էր, որ այն, ինչ պատահեց հայերի հետ, շատ լավ էլ կարող է պատահել հրեաների հետ ապագա Գերմանիայում:

Թեհլերյանի դատավարության ժամանակ նրան ի պաշտպան հանդես գալ ցանկացող մարդկանցից էր Մաքս Էրվին ֆոն Շոյբներ-Ռիխտերը: Սակայն նրան ձայն չտրվեց, քանի որ առանց այդ էլ բավականին շատ էին քննարկումները Հայոց ցեղասպանության մասին: Այդ անձը Առաջին համաշխարհայինի ժամանակ փոխհյուպատոս էր Օսմանյան կայսրությունում, ցեղասպանության ականատես էր և մեկն էր այն

գերմանացիներից, որը բողոքում էր երիտթուրքերի ձեռնարկած քայլերի դեմ, օգնում էր հայերին սնունդով: Տարօրինակաբար, Շյոբներ-Ռիխտերը նացիստ էր շարժման ձևավորման առաջին իսկ օրվանից և Հիտլերի մերձավոր ընկերն էր, ու Թեհլերյանի դատավարության օրերին ներկայացվում էր որպես Հիտլերի քաղաքական խորհրդատու: Սակայն նա զոհվեց Հիտլերի պուտչի ճնշման ժամանակ, երբ իր կյանքի գնով փրկեց վերջինիս վերահաս մահվանից: Իհրիգը հնարավոր է համարում, որ Շյոբներ-Ռիխտերը պատմած լիներ Հիտլերին Օսմանյան կայսրության, քեմալիստների և հայերի ու, մասնավորապես, Հայոց ցեղասպանության մասին: Այն դեպքերում, երբ Հիտլերը խոսում էր Օսմանյան կայսրության մասին, նկատվում էր, որ նա լավ տեղեկացված է թուրքական պատմությունից: Իհրիգը նկատում է, որ պատճառներից մեկը ենթադրելու, որ Հիտլերի հետ մտքեր են փոխանակվել Հայոց ցեղասպանության մասին այն հանգամանքն է, որ Հիտլերն ու Շյոբներ-Ռիխտերը միասին էին ժամանել Բեռլին, որպեսզի վերջինս վկայությամբ հանդես գար Թեհլերյանի դատավարությունում: Բոլոր դեպքերում, քանի որ Հիտլերը մոլի թերթ ընթերցող էր, իսկ Թեհլերյանի դատավարությունը լայնորեն մեկնաբանվում էր գերմանական մամուլում, նա վստահաբար ծանոթ էր գործին առնչվող հարցերին:

1920-ական թթ. Հիտլերն իր ճառերում դիմում էր հայերի օրինակին, երբ խոսում էր «ցածր ռասաների» մասին, ինչպիսիք որ հրեաներն էին: Մասնավորապես, 1928 թ. իր նյուրնբերգյան ճառում Հիտլերը նշում է, որ եթե քայլեր չձեռնարկվեն գերմանացի բնակչության աճի ուղղությամբ, «մենք աստիճանաբար կդառնանք հայերի նման ազգ»: 1929 թ. մի հրապարակումից պարզ է դառնում, որ նա գիտեր Պաղեստինում հայերի գոյության մասին: Նացիստական այլ տեքստերի քննությունից հասկացվում է, որ դրանցում Աթաթուրքի հաջողության նախապայմաններից մեկը դիտվում էր «հայերի

ոչնչացումը», որի անհրաժեշտությունը համեմատվում էր ամերիկյան հնդկացիների ոչնչացման հետ: Հայերի ներկայացումը որպես «Արևելքի հրեաներ» նացիստական հրապարակումներում և մամուլում այնքան էր տարածված, որ 1936 թ. Պրոպագանդայի նախարարությունը համապատասխան հրահանգ հրապարակեց, որտեղ նշվում էր, որ հայերն իրականում հրեաներ չեն: Երրորդ ռեյխի շատ հեղինակների համար «էթնիկ զտումը» դիտվում էր որպես նախապայման Նոր Թուրքիայի հաջողության համար:

Նոր Թուրքիան ներկայացվում էր որպես տիպային դեր ունեցող նաև կրոնական քաղաքականության ոլորտում: Հիտլերի կենսագիրները նկատում են, որ վերջինս կրոնի հարցերում այնուամենայնիվ այդքան արմատական չէր, որքան որ Աթաթուրքը: Բայց և այնպես Հիտլերը զմայլվում էր Աթաթուրքի լուծումներով «եկեղեցու» դեմ մղվող պայքարում: 1942 թ. օգոստոսին նա նկատել էր, թե «Իր կրոնավորների հետ որքա՜ն արագ հարցերը լուծեց Քեմալ Աթաթուրքը. դա [պատմության] ամենաապշեցուցիչ գլուխներից մեկն է: Նա միաժամանակ գլխատեց դրանցից 32-ին: Այա Սոֆիան ներկայումս թանգարան է»:

Գերմանական մամուլում Թուրքիան և Գերմանիան բնութագրվում էին որպես միանձնյա առաջնորդներ և, դրանով պայմանավորված, տնտեսության «վերակառուցման կամք» ունեցող երկրներ: Նոր Թուրքիան հաճախ համեմատվում էր Ամերիկայի հետ: 1936 թ. ռեյխսբանկի նախագահը Անկարան համարում էր «թուրքական ոգու մեծագույն ստեղծագործություններից մեկը», որը կարող է համեմատվել միայն ամերիկյան քաղաքների ստեղծման հետ: Մամուլի բազմաթիվ հրապարակումներում շեշտվում էր, որ Աթաթուրքի կառավարման սկզբում երկրում բացակայում էր արդյունաբերությունը, չկային անհրաժեշտ գումարներ, ավերված երկրից զատ ոչինչ չկար: Նոր գործարանների կառուցման, ենթակա-

ռուցվածքների ստեղծման, երկրի էլեկտրաֆիկացման խնդիրն արծարծվում էր հարյուրավոր հոդվածներում:

Փարիզյան խաղաղության պայմանագրի ամբողջական վերանայման շնորհիվ քեմալական Թուրքիան կարող է որակվել իբրև մինչպատերազմական շրջանի Եվրոպայի ռևիզիոնիստական պետություն: Սակայն Լոզանի պայմանագիրը Թուրքիայի համար երկու խնդիր թողեց չլուծված՝ նեղուցների ապառազմականացումը և Ալեքսանդրետի սանջակի ապագան: 1936 թ. նեղուցների ռազմականացումը մեծ աջակցություն ստացավ Գերմանիայում և լայնորեն լուսաբանվեց երկրի մամուլում: Անց էին կացվում բազմաթիվ զուգահեռներ գերմանական իրականության հետ, մասնավորապես, նեղուցների հարցը համեմատվում էր Հռենոսի շրջանի ապառազմականացման հետ: Նույն կերպ Ալեքսանդրետի սանջակի խնդիրը համադրվում էր Սուդետյան հարցի հետ: Մի խոսքով, Նոր Թուրքիան և Նոր Գերմանիան ներկայացվում էին որպես երկվորյակ եղբայրներ: Կար այն ամուր արմատակալած մտայնությունը, որ եթե թուրքերը հաջողում էին իրենց գործերում, ապա նույն կերպ կարող է հաջողության հասնել նաև Գերմանիան:

Աշխատության վեցերորդ գլուխը վերնագրված է «Երկրորդ համաշխարհային պատերազմը և Թուրքիան. մեկ ա՞յլ Իսպանիա» (էջ 209-222): Հեղինակը նշում է, որ 1936 թ. դրությամբ թուրքական ապրանքների արտահանության 51%-ը բաժին էր հասնում Գերմանիային, և թուրքական ներմուծումների ուղիղ կեսը նույնպես Գերմանիայից էր: Մինչև 1939 թ. թուրքերը գերմանական ռազմական տեխնիկայի՝ այդ թվում և օդանավերի ու սուզանավերի, հիմնական գնորդներն էին: Երկրորդ համաշխարհայինի տարիներին Թուրքիայի նշանակությունը նացիստների համար դարձավ խիստ կարևոր, պայմանավորված քրոմիտների արտահանման փաստով, որոնք որոշիչ դեր ունեին մաքուր պողպատի պատրաստման համար:

1939 թ. ամռանը Թուրքիան բարեկամության և փոխադարձ օգնության պայմանագրեր կնքեց Անգլիայի և Ֆրանսիայի հետ, իսկ Գերմանիայի հետ՝ միայն 1941 թ.: Խորհրդային Միության վրա Գերմանիայի հարձակվելու նախօրյակին Թուրքիան հայտարարեց իր չեզոքության մասին: Չնայած նման հայտարարությանը, Թուրքիայում բավականին ուժեղացան պանթուրքական տրամադրությունները, որոնք օգտագործվում էին նաև գերմանացիների կողմից: Պատահական չէր, որ ԽՍՀՄ սահմանին թուրքերը գրեթե ողջ պատերազմի ընթացքում կենտրոնացրել էին 28 դիվիզիա: Սակայն հենց որ հասկացվեց, որ Գերմանիան պարտության ճանապարհին է, Թուրքիան սկսեց փոխել իր քաղաքականությունը բազմամյա դաշնակցի նկատմամբ: Մասնավորապես, 1944 թ. գարնանը դադարեցվեց քրոմիտի արտահանությունը, և միայն 1945 թ. փետրվարի վերջին պատերազմ հայտարարվեց Գերմանիային: Այս վերջին քայլն էլ պայմանավորված էր այն գործոնով, որ միայն մի քանի օր էր մնում նոր ձևավորվող Միավորված ազգերի կազմակերպություն մտնելու համար:

Այսպիսով, ներկա հետազոտությունը որակապես նոր նյութ է դնում գիտական շրջանառության մեջ և դրա վերլուծությամբ՝ որակապես նոր եզրակացություններ առաջարկում: Մինչ այժմ գերիշխում էր այն կարծիքը, որ աշխարհի մեծագույն չարագործներից մեկը՝ Ադոլֆ Հիտլերը, ոգեշնչվում էր իր ավագ ֆաշիստ գործընկեր Բենիտո Մուսոլինիի գաղափարներով և գործունեությամբ: Շտեֆան Իհրիգը ցույց է տալիս, որ Հիտլերի և նացիստների համար հավասարապես կարևոր տիպային դեր էր խաղում Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը՝ ժամանակակից Թուրքիայի հիմնադիրը: Իհրիգի աշխատությունն այս կերպ նոր մոտեցումներ է առաջարկում նացիստական գաղափարախոսության և ռազմավարության արմատների որոնման գործում:

Հարություն Մարության

պ.գ.դ.

Murat Bardakçı, "Talat Paşanın Evrak-i metrukesi", İstanbul, Everest Yayınları, 2008, 272 s.

2008 թ. Ստամբուլում թուրք հայտնի լրագրող և ուսումնասիրող Մուրադ Բարդաքչըի կողմից և նրա առաջաբանով հրատարակում է «Թալեաթ փաշայի լքված փաստաթղթերը» վերնագրով գիրքը: Առաջաբանում Բարդաքչըն, անդրադառնալով գրքի ստեղծման նախապատմությանը, նշում է, որ Թալեաթ փաշայի անձնական իրերի մեջ, մասնավորապես, նրա ճամպրուկի աստառի տակից գտնվել է «Սև կազմով տետրը», որը, ըստ էության, ոճրագործի անձնական օրագիրն է, որտեղ նա գրառումներ է արել և տարատեսակ փաստեր արձանագրել: Այդ գրառումների մի մասը վերաբերում է նաև Հայոց ցեղասպանությանը, որն ըստ Բարդաքչըի՝ իբրև թե պետք է լույս սփռեր հայկական սփյուռքի «պնդումների» և այլ հարցերի վրա[1]՝ բնականաբար թուրքական թեզերին համապատասխան, սակայն հենց այդ նույն փաստերը առաջացնում են մի շարք հարցականներ, որոնք ոչ միշտ են տեղավորվում թուրքական ժխտողականության սցենարում:

Գիրքը բաղկացած է 4 գլուխներից, որոնցում ներկայացվում են «սև կազմով տետրի» մեջ տեղ գտած ցուցակները, քարտեզները, կայսրության բնակչության թվաքանակը, Թալեաթի նամակագրությունը, գրառումները և այլն: Գրքի երկրորդ գլուխը վերնագրված է «Հայերի տարհանումը ըստ նահանգների և գավառների» որտեղ ներկայացված է երիտթուրք պարագլխի գրառումները հայերի տեղահանման, լքյալ գույքի, որբացած հայ երեխաների տեղաբախշման մասին: Գրքում ներկայացված է Թալեաթի մի ցուցակ, որտեղ նշված է տեղահանվող հայերի թվաքանակը ըստ 11 նահանգների և նրանց նոր բնակության վայրերում տեղաբաշխումը: Ըստ Թալեաթի՝ ցուցակի տեղահանված և աքսորի վերջնակետ

[1] Bardakçı M., "Talat Paşanın Evrak-ı metrukesi", İstanbul, 2008, s. 14.